

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мелік».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողաւորին 10 կոպեկ.
Տ է Լ է ֆ օ Ն № 253.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՒՄԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Յրանսխական նախագահի ճանապարհորդութիւնը.— Ներքին Տեսչութիւնը. Կարա-Մուրադյանի յիշատակին. Նամակ Խմբագրութեան. Ներքին յուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պօլի լրագրութեան. Պրօֆէսոր Մէյնի դասախօսութիւնը Ասիական ընկերութեան նիստում. Արտաքին լուրեր.— Հեռագրութիւնը.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ազատ ժամեր. Նամակ Պարսկաստանից:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԶԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Յրանսխական Հանրապետութեան նախագահ Լուիս Ժանապարհ է ընկել Յրանսխական զէպի Ռուսաստան եւ այսօր, մայիսի 7-ին, պէտք է հասնէ Կրօնադատ, որտեղից նա կուղևորվի Պետերբուրգ: Ռուսաստանը պատրաստութիւններ է անել փառայել կերպով ընդունելու իր բարեկամ եւ դաշնակից պետութեան ներկայացուցիչին: Յրանսխական նախագահի հետ Ռուսաստան եւ զայն եւ Ֆրանսիական մի քանի միւսները եւ բարձր պաշտօնեաները:

Ներկայ այցելութեամբ Յրանսխական եւ Ռուսաստանը մի անգամ եւ հանդիսաւոր կերպով կը յայտնեն իրանց ժողովուրդներին եւ միւս պետութիւններին, որ բարեկամական այն յարաբերութիւնները, որոնք հաստատվել են ռուսական եւ Ֆրանսիական կառավարութիւնների մէջ, ոչ միայն չեն թուլացել, այլ եւ աւելի ու աւելի ամրապնդւում են տարեցատարի:

Մի շարք խոշոր քաղաքական եղելութիւններ, ինչպէս են հեռաւոր Արեւելքում տեղի ունեցած քաղաքական նոր երկրորդութիւնը, անդրօտարարական դաշնակցութեան հաստատվելը, Ամերիկայի տնտեսական առաջնադասութեան հետ զու-

գրնթաց երեւան եկող մի քանի քաղաքական գործառնութիւնները, Թիւրքիայի, Պարսկաստանի, Աֆրիկայի աստիճանաբար ենթարկվելը եւրոպական պետութիւնների ազդեցութեանը, եւ ուրիշ այդ տեսակի հանգամանքներ հանդէս են բերել մի շարք քաղաքական հարցեր, որոնց լուծման համար պէտք է պատրաստ լինել, որպէս զի դաշնակից պետութիւնները կարողանան կրկնապահել ընդհանրական զինուորական դիրք բռնել:

Ապագան կը պարզէ, թէ Ֆրանսիական նախագահի ներկայ տեսակցութիւնը ինչնոր խնդիրներ պէտք է շոշափէ եւ ինչ կարեւոր որոշումներ տեղի կունենան երկու մեծ պետութիւնների գերագոյն ներկայացուցիչների մէջ: Ռուսաստանը ընդունում է իր բարեկամ մեծ Հիւրերին ջերմագին ողջոյններով, հաւատարմով, որ Յրանսխական դաշնակցութիւնը բոլորովին համապատասխան է Ռուսաստանի պետական շահերին եւ միջազգային հասարակական շահերին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐԱ-ՄՈՒՐԱԴՅԱՆ ԹԻՇԱՍԱԿԻՆ

Հանգուցեալ Կարա-Մուրադյան լաւ էր ըմբռնել մեծ բանաստեղծ Շիրազի այն իմաստալից խօսքերը, թէ միայն հարկ մարդիկ երբ չունենան ի հարկէ, Կարա-Մուրադյան երաժշտական հանձնար չէր եւ գուցէ նրա քառամայն երգեցողութիւնը ունենար իր երաժշտական պակասութիւնները, բայց եւ այնպէս նրա մատուցած անխնայ ծառայութիւնը մեծ է նրա սէրը դէպի երաժշտութիւնը եւ որ գլխաւորն է՝ նրա եռանդը, հաւատը դէպի իր սուրբ գործը, որ նա աստիճանի էր չընկճվելով ոչ մէկ խնդրոտի առաջ, մեզ թոյլ է տալիս ողբալ այդ մարդու կորուստը: Եւ ինչպէս չողբալ. դա այն մարդն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԶԱՏ ԺԱՄԵՐ

Միասին բէ ջոկ—ջոկ

Անցեալները եւ ասացի, որ տղայ եւ աղջիկ երկնասերին պէտք է եւ աւելի օգտաւէտ է միասին կրթել, միասին ուսում տալ մի եւ նոյն դպրոցում, մի եւ նոյն նստարանի վրա:

Աւելորդ չեմ համարում կրկին անգամ վերադառնալ այն խնդրին:

Ամերիկական դպրոցներում շատ վաղուց է գործադրվում երկու սեռի միասեղ ուսուցման սխեման: Եւ այնտեղ ոչ միայն երեքը չէ լավում որ եւ է արտուճել կամ բողբոջ այդ սխեմայի, իբր թէ վաղը ու բարձր փչացող, անբարոյականացող սխեմայի դէմ, այլ ընդհակառակը երկար տարիների բարեյայտել են արդիւնաւոր փորձերը հաստատում են, որ կինը այդ նուրբ—քաղաքակրթված աշխարհում վայելում է աւելի յարգանք, որ կնոջ անձնական պատիւը եւ անեղ աւելի է ապահովված, քան մի ուրիշ տեղ:

Միասեղ ուսուցման հակառակորդները բերում են, բացի բարոյականից, զանազան արգելափակումներ:

Մանկավարժական տեսակետից, ասում են նրանք, անյարմար է տղայ եւ աղջիկ սաներին նստեցնել մի եւ նոյն դասարանում եւ պարապել նրանց հետ մի եւ նոյն առարկան մի եւ նոյն պրոգրամով: Դրանից կարող է տուժել առաջադիմութիւնը. ուրիշ խօսքերով՝ աղջիկը չէ կարող տղայի հետ հաւասարապէս սովորել եւ, ընկալաբար, պատճառ կը դառնայ տղայի յետաձգութեան:

Բայց դուք ինքներդ էլ լաւ տեսնում էք, թէ որպէս թոյլ է նոյն իսկ յայտնի մանկավարժ-

էր, որ մեր ընտանեկան երեկոյթները ազատեց ուրախութեան ժամանակ թրջական մուկամբ: Բազմերից եւ չիքստաններից: Նա մեր ժողովրդի ամեն խաւերում, թէ երեխաների եւ թէ երիտասարդների, թէ հարուստների եւ թէ աղքատների մէջ, արմատացրեց հայոց ժողովրդական երգերը: Բաւական է եթէ ասենք, որ Կարա-Մուրադյան 17 տարեկան ընթացքում 47 քաղաքներում կազմել է 90 խումբ խառն կանանցից եւ տղամարդկանցից բաղկացած: Ամեն մի խումբում միջին թիւով մասնակցելիս են եղել 40—150 հոգի: Այդ հաւելից կարելի է եզրակացնել, թէ ինչ է եղել այդ մարդը մեզ համար: Եւ եթէ դրա վրա էլ աւելացնենք եւ այն, որ այդ անհասակ գործունէութեան համար իրեն նիւթական վարձատրութիւն հայեցիս կողմից ասացել է 3,100 ռուբլի դէֆիցիտ:

Ոչինչ չը կարողացաւ նրան հիասթափեցնել, յետ կանգնեցնել այն գաղափարից, այն համոզմունքից, թէ ժողովրդական երգերը կարելի է եւ պէտք է ժողովրդականացնել: Նրա այդ եռանդի առաջ խոսնարհվում էին նրա երդուհալ հակառակորդներն անգամ: Հանգուցեալ Կարա-Մուրադյան այն երաժշտներից չէր, որոնց հասարակութիւնը միայն թատրոնական էստրադից կարող էր լինել: Ինչ տեղ էլ որ լինէր, ինչ փառքիկ չէր ջանի մէջ էլ որ պատահէր, եթէ հանգուցեալին խնդրէիք երգել, իսկոյն տեղն ու տեղը խումբ կը կազմէր, կը դաշնակցէր, կը շարունակէր այդ շրջանը: Իսկապէս նա աւելի մեծ գաղափարով էր ներշնչված, նա կամենում էր, որ ամենքը երգեն, ամենքը ցաւեն եւ ուրախանան այն վայրում եւ տանքվում է հայ ժողովուրդը:

Պէտք էր տեսնել հանգուցեալի Կարա-Մուրադյան այժմեան վեհափառ վաթողիկոսի գալուց առաջ էջմիածնում, տեսնել որ եւ գիշեր տեղող աշխատանքը, նրա եռանդը: Մի տեղ եկեղեցական խմբի հետ էր պարապում, միւս տեղ ազգային ժողովրդական երգեր էր պատ-

րաստում պատրաստվող հանդէսների համար: Մենք ապա՛ծ էինք, թէ ինչպէս այդ մարդը նուիրված է իր գործին, որքան սիրում է այդ գործը եւ ինչպիսի մեծ եռանդի տէր է: Նա այդպէս էր ամեն տեղ, ամեն քաղաքում, նոյն իսկ ամենաշուրջ պայմանների տակ անգամ: Թէեւ Կարա-Մուրադյան զլիաւոր աշխատանքը ազգի առաջ, ինչպէս ասացի, խմբական երգեցողութիւնն էր, սակայն նա իբրեւ հոգով եւ րաժիշտ, խորթ չէր ընդհանրապէս հայ ընտանիքներում: Երաժշտութիւն տարածելու գործին, մասնաւոր Բագում նա շատ բան է արել: Ասում են, որ մինչեւ Կարա-Մուրադյան Բագու գալը այստեղ շատ քիչ հայ ընտանիքներ կային, որոնք հասկանալիս երաժշտութեան կարեւորութիւնը կենալի մէջ ընդհանրապէս եւ ընտանիքի մէջ մասնաւորապէս: Նա առաջինը սկսեց մուտք գործել այդ ընտանիքները եւ ներշնչել նրանց մէջ սէր դէպի երաժշտութիւնը: Այսօր մենք ունենք ստուար քանակութեամբ օրիորդներ, երիտասարդներ եւ մայրեր, որոնք ներշնչված են նոյն սիրով եւ ներշնչում են այդ սէրը դէպի ազգային երաժշտութիւնը: Թէ ընտանիքում եւ թէ հասարակութեան մէջ:

Կարա-Մուրադյան ծառայութիւնը մեծ է դէպի ազգը եւ չափազանց թոյլ է իմ գրիչը թարգման հանդիսանալու նրա ծառայութիւններին: Այն, նա մեռաւ, բայց երբեք չի մեռնի այն գործը, որ նա սկսեց, յուսանք, որ նրա ցանած սերմը կը տալ մէկին մէկ, մէկին հինգ, գուցէ եւ մէկին տասը:

Միայն թէ այն դրօշակը, որը նա մեռնելուց մի ժամ առաջ միայն ձեռքից բաց թողեց եւ որի վրա խոշոր տառերով գրված էր «անշահասէր եռանդ» բառերը ամուր պահեն նրա հետեւողները: Շատ քաղաքներում պարտաւորաբար կազմած բազմաթիւ խմբերի մատաղ անդամները թող լինեն այն նորաբողբոջ ծաղիկները, որ պիտի բուսնեն նրա թարմ գերեզմանի վրա: Հայ հասարակութիւնը չը կարողացաւ

եւ եղբայր արարածներին միմեանցից դպրոցի մէջ, մի տեղ, որի նպատակն է, ի միջի պլոց, կրթել եւ ազնուացնել մարդկային շատ ինստինկտները:

Պրօֆէսոր Ֆերչայլդ իր բազմամեայ դիտողութիւններից եւ փորձերից եկել է այն եզրակացութեան, որ երկուստե անների միասեղ ուսուցումը տուել է միշտ անպայման բարեյայտող հետեւանքներ. տղամարդ-երիտասարդի կոպտութիւնը, անվերելիութիւնը եւ հօգիւրդ չփվելով կին-երիտասարդի քնքրութեան, երկչոտութեան եւ զգայնութեան հետ՝ միմեանց կրթել են, միմեանց պակասը լրացրել...

Անցնենք Եւրոպա:

Երբ առաջին անգամ կինը երեւաց Յրանսխայի համալսարաններում, ամեն կողմից լավեցին բողբոջ, ծաղիկ, թշնամական արտայայտութիւններ եւ ցոյցեր:

Կինը ուշք չը դարձրեց, չը վառվեց... Իր լուրջ խտապեցողութեամբ եւ, ամենաւաղ, իր բարեխիղճ աշխատասիրութեամբ նա կարողացաւ գրաւել իր խորթ դասընկերների յարգանքը եւ ցոյց տալ, որ ինքն էլ համալսարանական ընտանիքի անդամ է յայտնի իրաւունքներով եւ պարտականութիւններով: Այդ համալսարանները այսօր շատ ազգերի համար կարող են ծառայել իբրեւ օրինակ:

Դրանք այժմ Ռուսաստանին:

Անցեալ տարի մայրաքաղաքի լրագրիները լուր տարածեցին, իբր թէ ժողովրդական լուսաւորութեան միւսիստը դիտաւորութիւն ունի թոյլ տալ իբրեւ ունկնդիրներ համալսարանի պատմա-իւրաքանչիւր անհատական ֆակուլտետներում այն անձանց, որոնք աւարտած կը լինեն իգական գիմնազիան կամ ուրիշ իգական միջնակարգ հաստատութիւն: Յետոյ՝ այդ ֆակուլտետը աւարտող կանանց իրաւունք պիտի տրվէր դասաւանդել արտական միջնակարգ դպրոցներում:

Սա նշանակում է—իգական գիմնազիան ա-

նախնականապէս վարձատրել նրան կենդանութեան ժամանակ: Գուցէ մեռնելուց յետոյ օգնէ նրա որբացած ընտանիքին, որ այսօր ամենայն իրաւունք ունի հասարակութիւնի օգնութիւն սպասելու: Եթէ միայն մենք հայերս, մեր գործիչներին գնահատել եւ վարձատրել գիտենք, պէտք է չը մոռանանք մեր պարտքը:

Տիկին Եւգենիա Պոպովան

Բ ա գ ու

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պետերբուրգ, ապրիլի 20-ին

Ուղիղ մի տարի առաջ Պետերբուրգում գեղարուեստ սիրող-սովորող հայ ընկերական-ուսանողական մի շրջանում յղացաւ մի այսպիսի միտք: Գրիգոր Զանչեան անունով մի յիշատակը յարգած լինելու համար հրատարակել մի գեղարուեստական-գրական չքեղ ժողովածու: Գաղափարը ինքն ըստ ինքեան համակրելի լինելով, այդ միտքն արծարծեց աւելի լայն շրջանում ու գործով սկսելու եւ գլուխ բերելու համար մի ժողովում ընտրվեց խմբագրական մասնախումբ:

Գործը սկսվեց եռանդով: Հայ եւ ռուս թերթերում նամակներ հրատարակվեցին ցանկացողներին աշխատակցութեան հրաւերելու: Բացի այդ, յանձնաժողովը առանձնապէս պատուաւոր հրաւիրեց թերթ-նամակներ ուղարկեց գեղարուեստի ու գրականութեան մէջ անուանի անձերի, խնդրելով նրանց մասնակցութիւնը:

Ինչ միջոցներով պէտք էր հոգալ յիշատակութեան արժանի հրատարակչութեան անուան խմբակը այդ գործը: Բաժանորդագրութիւն բանալու միտքը միանգամայն անյարմար համարվեց: Գործը ձեռնարկողները աչքի առաջ ունէին մասնաւոր անհատներ: Բազում եւ թիֆլիսում եւ որոնցից սպասում էին նախնական օժանդակութիւն: Բայց իրողութիւնը այս ցոյց տուեց, որ թիֆլիսից անհաւարար պատահաւոր ստացվեց, իսկ Ռուսիայէլ պատճառ բռնեց իր տեղափոխումը իրենից:

Մինչ այս մինչ այն, յանձնաժողովը ստացաւ տպագրութեան բաւական նիւթ թէ հայերէն եւ թէ ռուսերէն. գլխաւորն էլ շատ հետաքրքրութեան արժանի նիւթեր:

Այժմ ամեն բան պատրաստ է համարեալ: յոյժ կայ, եռանդ կայ, բաւարար պատրաստակարարութիւն նոյնպէս էլ պակասում: Կարկասում է միայն փողը—այդ անխնայարեւոյր:

Երկու գրքի (հայ եւ ռուս լեզուով) հրատարակութեան համար հարկաւոր է 5000 ռուբլի: Գործը պէտք է անել վայելուչ, պատկառելի, այլապէս միտք չունի մի թեթեւ բան հրատարակելու:

Ուրիշ հնար չէ մնում մեզ, եթէ ոչ դիմել լրագրութեան, հրատարակ գուրս գալ ու հարցնել—արդեօք մեզանում չի գտնվի մէկը, որ հոգայ այդ հրատարակութեան ծախքը, թէկուզ յետոյ յետ ստանալու պայմանով: (Հրատարակատեւ մի օրիորդ կամ կին ազատ պիտի մտնէր համալսարանի շէնքով, լսէր դասախոսութիւններ, աւարտէր կուրսը ու դար զասեր աւանդելու արական, այսինքն տղայոց գիմնազիաներում, ընթալական եւ այլ դպրոցներում):

Սա կը լինէր, ի հարկէ, մի շատ նշանակաւոր սիրովորդ, որը իւրաքանչիւր ազատ մտածող մարդ պարտաւորութիւն կը համարէր ընդունել երախտագիտութեամբ եւ ողջունել ի սրտով:

Բայց ինչ կառէին հասարակական բարոյական-նուրբան պաշտպան փարսեցիները:

«Համալսարանը անառակութեան որդի դարձաւ, Սոքոմ-Գոմորը նորէն յարուցեցին առաւ... կաղաղակէն նրանք երկրազնդի մի բեւեռից մինչեւ միւրս»:

Թողնենք, աւելի լաւ է, այդ «ձայն բարբառոյ յանապատիւն», լսենք անգլիացի Findlay-ի կարծիքը:

1894 թուականին Անգլիայում կազմակերպվեց մի մասնաժողով, որի գործը պիտի լինէր հիմնադրապէս ուսումնասիրել միջնակարգ կրթութեան խնդիրը: Այդ մասնաժողովի գլխաւոր անդամ Findlay ասում է, ի միջի այլոց, հետեւեալը:

«Միտեղ կրթութեան եւ ուսուցման սիւստեմը կարելի է եւ պէտք է մտցնել այնտեղ, ուր երեխաները սովոր են այդ բանին մասնակցութիւնից, բայց ոչ այնտեղ, ուր նրանք մինչեւ 13—14 տարեկան հասակը սովորել եւ կրթվել են ջուր-ջուր»:

Այդ հիման վրա էլ եւ անցեալ յօդուածին մէջ յայտնեցի այն կարծիքը, որ միտեղ ուսուցումը շատ ցանկալի է եւ պէտք է սկսել միայն հինգերի, այն էլ «Մանկական Պարտէզ» կոչվող կրթարանից:

Սա կը լինի, ինչպէս խոստացել եմ, յաջորդ գրոյցներին ներքո:

Սերմացան

կուլտեան վաճառուից զոյացած արդիւնքը ենթադրում է գործ զին նոյնպէս Զանչեանի անունով):

Փողը հարկ չը կայ միանուագ տարւել, կարելի է եւ մաս-մաս. եւ անմիջական յարաբերութիւն ունենալ կարելի է տպարանի, թղթեալ-պահեստի եւ այլ ֆիրմաների հետ, որոնց որ ցոյց տալու լինեն գործի մարդիկ:

Ծանփառողովը մինչեւ այժմ իր սուղ միջոցները այդ գործի համար ծախս է ունեցել մօտ 150 ռուբլի:

Այսպէս ահա, իրերի իսկական պատկերը յայտնվում էր հասարակութեան առաջ, յոյս ունենալով ինչ նրա ունեւոր անդամներից մէկը (կամ մի երկուսը միասին) դուրս կը գալ եւ մեզ կը յայտնէ իր բարեյօժար պատրաստակարարութիւնը:

Ոգեւորված խօսելու, ճառելու, գրելու, ցատկալցելու եւ հոգեհանգիստներ կատարելու շէր-ջանն անցաւ, այժմ դէպի Գրիգոր Զանչեան ունեցած յարգանքը գործով ցոյց տալու ժամանակ է. ով կարող է թող զննայ, առաջ գայ:

Մինչեւ յունիսի 30-ը կը սպասենք, եթէ մի տեղից մի բաւարար պատասխան կամ տեղեկութիւն հասաւ մեզ, շատ ուրախ եւ շնորհակալ կը լինենք, իսկ եթէ ոչ, հէնց յունիսի 1-ին, առաւօտեան մեզ մօտ հասաւորված ըստ Նիւթերի ներդրութեան հետ կուղարկենք իրանց տէրերին, նախ՝ ամաչելով Զանչեանի անուան մի յիշատակի առաջ, երկրորդ արտասույթով մինչեւ այժմ այդ բանի համար մեր գործը եռանդն ու ժամանակը:

Ահա հասցէ.—С.Петербургъ, Офицерская, № 20 Г. региму Левоуляницъ.

Խմբագրական գործավար Ծանփառողով

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՆԻ

Երէկ, մայիսի 6-ին, Նորին Մեծութիւն Թաւուր Կայսրի ծննդեան տօնի առիթով, գոհաբանական մաղթանքներ կատարվեցին ռուսաց Ալեքսանդր-Նեւսկի զինուորական տաճարում, հայոց Վանքի մար-կեղեցում, կաթօղիկների եւ բողոքականների եկեղեցիներում, ինչպէս նաեւ մասնաշաղկապների մզկիթում եւ հրէաների աղօթատան մէջ: Քաղաքը առաւօտանից զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյան լուսավառված լապտերներով:

Կարա-Մուրզայի աշխատութիւնների հրատարակութեան համար ստացանք Ս. Բարխուդարեանցից 40 ռուբլի, որ գոյացել է Բագում մերա տունը կոնցերտից, Կարսից, Գաւր. Զանայ Տուրիփալանից նրա միջոցով ժողոված 5 ռուբլի (ժողովարարութիւնը շարունակվում է) եւ Հինգի յիսից Թար. Թումանեանից 2 ռուբլի: Ընդամենը 47 ռուբլի, որ նախկին ժողոված գումարների հետ անում է 187 ռուբլի:

ՆԱԽԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թէհրան, ապրիլի 18-ին

Եզդիւտների դպրոցները (մէկը՝ արջկանգ եւ երկուսը՝ տղայոց) Թէհրանի հայութեան միջին եւ ստորին դասակարգերի համար ուսման ու կրթութեան ամենալուսաւոր կենտրոններն են համարվում: Նրանք իրանց մանուկները ամենայն ուրախութեամբ յանձնում են այդ մօն-պէսների եւ մասըրների գէշերթիկի եւ չքաւորների համար ձրի դպրոցները եւ հետեւ էլ մի թուղթ այս բովանդակութեամբ: «Իմ որդին յանձնեցի կաթօղիկաց վարձարանը 8 տարի պայմանաժամով, որի լրանալուց առաջ իրաւունք չունեմ այնտեղից հանելու, իսկ եթէ հանելու լինեմ, ուրիշ դպրոց տալով, իրաւունք չունեմ: Այս պայմաններից եթէ չեղելու լինեմ, պարտաւոր եմ որդուս վրա նրանց արած ծախսի կրկնապատիկը վճարել»:

Եւ այսպիսով այդ դպրոցները խլում են մասնակցութեան ընտանիքից, 8—10 տարի պահում, մեծացնում են նրանց՝ չորս տեւ պատերի մէջ, ուր իշխում է միջնադարեան սոսկալի կարգապահութիւնը, ուր միայն ծննդ է, որ ստիպում է սովորել երեխային թէ ինչ պատի է Աստուծոյ եւ տաս տարուց յետոյ վերադարձնում են ծնողներին էական, որոնց մէջ մեռած է բանականութիւնը, ջախջախված է սեփական կամքը, եւ որոնք կամ կրօնական ֆանատիկութեամբ կուրացած՝ ուղեւորվում են դէպի Հնոս, պապի ոտքը, եւ կամ քաղաքային կեանքի ստոր դերերին են ստանձնում: «Երեխան ֆրանսերէն կը սովորի»,—այս յոյսով եւ այս խօսքերով է, որ հայ ծնողը յանձնում է իր որդուն այդ տեղերը, ուր մօնպէսները մեռնում են երեխայի մէջ որ եւ է ազգայնական գաղափար, գրկելով նրան մայրենի լեզուի ամենատարրական պահանջները: Հայերէնի դասերը զեկակարում է եւ պարոն, որի կրթութեան չափը չէ անցել Թէհրանի միջնորդութեամբ տիրապետող այնքան աննախանձիկ կրթութեան չափից, որտեղ եւ օրական կէս կամ երեք քառորդ ժամ իսկ մնացած բոլոր ժամերը երեխան իր ուղեղը տանջելով, ճիպտի ահալու շարժումների առջեւ ճնշված, պիտի անգիր ասէ քաթէլիզմի տողերը, ուր միայն ամեն մի երգակարութիւն յանցագործ է պատկերացնում: Իսկ անուշը այդտեղ այնքան անբաւարար է, որ երեխաների աչքերի մէջ միշտ կարելի է նշմարել անյաղ քաղցի փայլը: Ձմեռը նրանց սովորական ուսուցիչն է խաչած չաղգամ եւ ճակնդեղ հացի հետ: Ստրկացումը այնքան սոսկալի չափերով է գործ դրվում, որ մանուկը շատ շուտով ընտելանում է կեանքի այդ նոր պայմաններին եւ մի քանի ամիս անցնելուց յետոյ նա ամենեւին իր լիճակից չէ գնալու վրա, չէ տրամադրւում կողմնակի հարցնողի առջեւ: Եւ այս վիճակը շարունակվում է երկար ու ձգտ տարիներ, որի միջոցին մեռնում են շատ չքաւոր ծնողներ, այն միակ խաղճի ու սրտի հանգստութեամբ, որ իրանց զաւակը անտէր չէ, որ փողոցներում չի թափափ, հակող աչք ունի իր վրա, որ վերջապէս կարող է ուսում առնել եւ ֆրանսերէն գիտենալով, հանգիստ ապրուստ ձեռք բերել... Եւ որքան երբ չափահասութեան են հասնում, երբ արդէն սովորած են լինում իրանց ծնողների այնքան փափագած ֆրանսերէնը, արդեօք պատկզում է նրանց յոյսը...:

Միայն թէհրանցի չքաւորը չէ, որ իր որդին յանձնում է այդ թշուառութեան բոյնը, հեռաւոր քաղաքներից, գաւառական գիւղերից անգամ այստեղ են ուղարկվում անուկ գոհեր: Եւ իսկ իսկ այս տարի Ռաշտից մի հայ իր երկու որդիներին բերեց եւ յանձնեց այդ դպրոցը: Եղեւ եւ հայ քահանաներ էլ, որոնք գիւղերից

Պետերբուրգի թերթատարների նորարարութեամբ մտնել ցանկացողների համար սահմանված են հետեւեալ կանոնները: Առաջիկայ սեզօնի ընթացքում թշնկվել ցանկացողները պէտք է նախօրօք ուղարկեն 30 ռուբլի, որպէս մի ամսվայ վարձ, եւ յայտնեն, թէ որ ամսից եւ ամսի քանիսից պէտք է տեղ պահել նրանց համար (միայն մայիսին եւ յունիսին): Բուժարանում ապրող հիւանդները ստանում են բացի բնակարանից, ճաշ եւ թէյ, իսկ բժշկական խորհուրդը, էսպէտուկի ջրերը եւ ծծմբային ու ցելսի լողարանները տրվում են նրանց ձրիաւոր 30 ռուբլու կանխավճարը պէտք է ուղարկել Կարմիր Խաչի ուսւսական ընկերութեան Պետերբուրգի բաժանմունքի գանձապահ Կէզէվիչին:

Մեզ խնդրում են հաղորդել, որ հանգուցեալ Գրիգորափոր Կարա-Մուրզայի մահվան քառասունեքի հոգեհանգիստը յետաձգվեց մայիսի 6-ից մինչեւ կիրակի, մայիսի 11-ը:

Կիրակի օր, մայիսի 5-ին, տեղի ունեցաւ երաժշտագէտ Յ. Տէր-Դաւթեանի աշակերտների եւ աշակերտուհիների կօնցերտը թիֆլիսի երկրորդ արական գիմնազիայի դահլիճում: Ժողովված էին ծնողները, պատուաւոր հիւրեր, երաժշտական դպրոցի ուսուցիչներ, մասնիկ ներկայացուցիչներ եւ երաժշտասէրներ: Կօնցերտը բաղկացած էր խմբական նուագութեանից եւ սոլոներէից: Խմբական նուագումները առհասարակ շատ աջող էին. նրանցից աւելի կատարեալ էին Արեւսիկ Էդեմիսը եւ Ֆուգան, Չալիօսիկու «Трубада»-ն եւ Բուրիսլայեյ-Նի Տրեպակաւ: Առանձին նուագողներից աչքի էին ընկնում տիկին Կ. Մարտիկայա, որ ամուսն է դեղեցիկ կերպով պարզ չէրտնող եւ ընդարձակ թափերով, օրիորդ Կ. Ստանեան, որ ունի լաւ տեխնիկա եւ նուագում է իմաստալի կերպով, օր. Մանանեան, որի նուագը ամբողջ է եւ որոշ, օրիորդներ Դրաշեփակայա, Բուրաշեփակայա եւ Բուրիշեփակայա ու պատանի Մէլիք-Փարսազանեան ունեն լաւ տեխնիկա, օր. Ամիրաղօվա, որ ունի լաւ տեխնիկա, բայց դեռ հասարակ չէ նուագում: Բաւարար էին եւ միւս մասնակցողները: Հասարակութիւնը գոհ մնաց կօնցերտից եւ Տէր-Դաւթեանի դասաւանդութեան արդիւնքներից: Տէր-Դաւթեան ստացաւ իր աշակերտութիւններից եւ աշակերտներից երկու պսակ եւ երկու թանգաքին նուէրներ: Աշակերտուհիներից մէկը, օր. Բերի-Ժանեան, ուսանողների կողմից ասաց մի ճառ, որի մէջ յայտնեց երախտագիտական զգացմունքներ դէպի իրանց ուսուցիչ գործունէութեան չափից, տեւում են օրական կէս կամ երեք քառորդ ժամ: Իսկ մնացած բոլոր ժամերը երեխան իր ուղեղը տանջելով, ճիպտի ահալու շարժումների առջեւ ճնշված, պիտի անգիր ասէ քաթէլիզմի տողերը, ուր միայն ամեն մի երգակարութիւն յանցագործ է պատկերացնում: Իսկ անուշը այդտեղ այնքան անբաւարար է, որ երեխաների աչքերի մէջ միշտ կարելի է նշմարել անյաղ քաղցի փայլը: Ձմեռը նրանց սովորական ուսուցիչն է խաչած չաղգամ եւ ճակնդեղ հացի հետ: Ստրկացումը այնքան սոսկալի չափերով է գործ դրվում, որ մանուկը շատ շուտով ընտելանում է կեանքի այդ նոր պայմաններին եւ մի քանի ամիս անցնելուց յետոյ նա ամենեւին իր լիճակից չէ գնալու վրա, չէ տրամադրւում կողմնակի հարցնողի առջեւ: Եւ այս վիճակը շարունակվում է երկար ու ձգտ տարիներ, որի միջոցին մեռնում են շատ չքաւոր ծնողներ, այն միակ խաղճի ու սրտի հանգստութեամբ, որ իրանց զաւակը անտէր չէ, որ փողոցներում չի թափափ, հակող աչք ունի իր վրա, որ վերջապէս կարող է ուսում առնել եւ ֆրանսերէն գիտենալով, հանգիստ ապրուստ ձեռք բերել... Եւ որքան երբ չափահասութեան են հասնում, երբ արդէն սովորած են լինում իրանց ծնողների այնքան փափագած ֆրանսերէնը, արդեօք պատկզում է նրանց յոյսը...:

Միայն թէհրանցի չքաւորը չէ, որ իր որդին յանձնում է այդ թշուառութեան բոյնը, հեռաւոր քաղաքներից, գաւառական գիւղերից անգամ այստեղ են ուղարկվում անուկ գոհեր: Եւ իսկ իսկ այս տարի Ռաշտից մի հայ իր երկու որդիներին բերեց եւ յանձնեց այդ դպրոցը: Եղեւ եւ հայ քահանաներ էլ, որոնք գիւղերից

Թիւրք Հասարակութիւնը հետաքաւ կօնցերտից գոհ տրամադրութեան ներքոյ:

Թիֆլիսի նահանգապետը առաջարկեց թիֆլիսի քաղաքապետի պաշտօնակատարին դադարեցնել դուռայի այն որոշումների կատարումը, որոնցից առաջինով վճռված է ուղարկել նոր անգամի պաշտօնի համար ընտրված համարի երեք անձերի, բայց ներկայացնել հաստատութեան միայն մէկին, ամենից աւելի ձայն ստացողին, իսկ երկրորդով—քաղաքային հողաւորները յատկացնել Ծամախու երկրաշարժից վնասվածներին տներ շինելու համար:

Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի կարգադրութեամբ՝ այս ամառվայ ընթացքում կուղարկվեն Կովկասեան կուրորտները եւ ամառանոցները միջնակարգ արական ուսումնարանների դաստիարակներ՝ հսկելու համար այն աշակերտների վրա, որոնք պէտք է ապրեն այնտեղ:

Երկրագործութեան միջնորդութեան մէջ հարց է բարձրացրած կազմելու անախագործական պարբերական ցուցահանդէսներ Ռուսաստանի գանապան քաղաքներում: Այս հարցը մանրամասնօրէն մշակելու համար միջնորդութեան մէջ կազմված է առանձին մասնաժողով:

ԲԱՊՈՒԻՑ մեզ գրում են. «Բագուի տաքերը արդէն սկսել են: Գործերը ըստ կիւլոյթի կենդանանում են: Յուսահատ անգործ մնացածները նորից գրասենեակից-գրասենեակ ընկնելով տեղ են խնդրում: Մեր տղաները եւ մանուկները կառավարիչներ օգտւում են առիթից եւ շահագործում թաղայեցիներ... Նոյն իսկ մի քանի հարուստ ըուրի ստացող զիպլուսուր ինժեներները այսօր 100—150 ռուբլով ուրախութեամբ Բալայանի են գնում այն ծանր միջնորդութեամբ խեղդվելու...»:

ԴԶԼԱՐԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 16-ին դերասան Ա. Վրոյր, տեղիս սիրողների մասնակցութեամբ, նախկին հայոց արական դպրոցի դահլիճում ներկայացրեց «Դոն-Գրիգոր» 3 գործողութեամբ կոմէդիան եւ «Աղան եւ Նուս» մօղդլիլը: Ձր նախկին Դաւալի աղբիւրն հասած աղէտին, դահլիճը համարեալ լիքն էր հասարակութեամբ: Երկրորդ ներկայացումը տեղի ունեցաւ ապրիլի 21-ին նոյն դահլիճում, դարձեալ սիրողների մասնակցութեամբ: Խաղացվեց Սոլիերի Ալգաշը: Երկու ներկայացումից էլ ժողովուրդը գոհ մնաց»:

ՀԱՐՈՒԹ գիւղից (Ջիրբայի գաւառ) մեզ

իրանց զաւակներին ուղարկել են այդտեղ:

Եւ եթէ պատահել է, որ եղել են հիւսթափ վաճառ, եղել են եւ այնպիսի ծնողներ, որոնք կամեցել են ազատել գոհերին վերջնական անկումից, այդպիսինքն ֆարաշների բնութեան տակ կատարել են պայմանագրի տողերը—«պարտաւոր եմ որդուս վրա նրանց արած ծախսի կրկնապատիկը վճարել»:

Աղջիկների դպրոցը մի եւ նոյն պատկերն է ներկայացնում մեր աչքին. այդտեղ էլ նոյն ստրկացումը, նոյն միջնադարեան կարգապահութեամբ: Այդտեղ կան հինգ տարեկանից մինչեւ 17—18 տարեկան աղջիկներ, հայ եւ ասորի, որոնք խնամվում են այդ կոչս կոչված հրէշների ձեռքով: Չափահասներին ամուսնացնում են նոյն այդ կոչսերը առաջին պատահած երիտասարդի հետ, նոյն իսկ եթէ նա կտոր հաց չունի: Եւ ճանաչում եմ այդ տեսակ ամուսնացածներից յետոյ բաժանված երկու կտորացի, որոնք ընդունել են մասնակցութեան իրանց ծնողը գտնվում են հասարակաց տներում: Այս բոլորի մասին այնքան է գրվել, որ մենք յաւանդութեան չունենք ամենեւին նոր բան ասած լինելու, մեր նպատակն էր միայն թէհրանի հայութեան ուղարկութիւնը հրաւիրել այդ իրողութեան վրա:

Եւ զեռ այս այսպէս էլ այստեղ, որը մայրաքաղաքի առաւելութիւնն ունի, ուր հայերը ամեն տեսակ միջոցներ ունեն խուսափելու այդ չարքից, ինչ պիտի լինի քաղաքներից դուրս, խուսափաւ անկեղծներում, ուր ոչ աչքն է տեսնում եւ ոչ ականջը լսում... Ինչ պիտի լինի այն թշուառ երկրից, որ ողորկված է այս տեսակ հիմարութեաներով, որ կրթութեան, լուսաւորութեան տարածումը շատ տեղերում միայն սրանց միջնորդն է, ուր անկարող են մաքառել սրանց դէմ... Եւ թէհրանցի հայն ինչ ունի սրանց դէմ, մի հատիկ ազգային դպրոց, որ հազիւ քաղաքում իր թշուառ գոյութիւնը եւ մէկ եւ ընդհանրապէս միանախանների դպրոցը... Սակայն զրանց մասին յետոյ... Կ. Տիման

Электротехнический Групп. Издат. Т—ва. Б.-Ванская ул.